ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Բուլղարիոյ համար
Տարեկան 12 Ֆր
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար
Տարեկան 3 տլր.
Վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքէն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։
Վառնայի համար ձեռքի 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ ու դրամ ղրկել Խմբագրութեան հասցէին.

Редакция на вѣстникъ „Шаржумъ" Варна

Redaction du journal „Charjoum" Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձեռքի) 20 ՍԱՆԹԻՄ (
Բուլղարիոյ համար ձեռքի) 15 ՍԱՆԹԻՄ (

Գրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

R. P. Kalémcarian, Mechitharistengasse W. 4. Vienne (Autriche)

ՌՈՒՍԱՀԱՅԵՐԻ ԱՆԵԼԻՔԸ

«Շարժում»ի գոյութեան օրից սկսած մենք միշտ աշխատել ենք ապացուցել և համոզել որ Ռուսահայութեան անպայման կորստի վտանգ է սպառնում, և նրա փրկութիւնը նրանում է որ նա իր ամբողջ ճիգերը պէտք է թափէ գոնէ Տաճկահայաստանը փրկելու։

Մենք մի քանի անգամ կրկնել ենք որ մեր ամենամեծ թշնամին Ռուսն է և կատաղի պայքար ենք մղել մեր այն ազդեցիկ գործիչների դէմ, որոնք ձգտում են ունեցել հայ ժողովրդին շեղել ուղիղ ճամբից և ռուս կառավարութեան վրա յոյս դնել տալ։

Ռուս կառավարութեան վերջին կարգադրութիւնը, եկեղեցական կալուածները գրաւելու մասին, եկաւ ամենակոշտ կերպով ապացուցանելու որ մեր, ինչպէս և մեզ նման մտածողների, ասածները շատ ճիշդ են, ու վտանգը մեր երեւակայածից անգամ աւելի մօտիկ է։

Այդ կարգադրութեան անմիջապէս հետեւող կարգադրութիւնը պէտք է լինի Ռուսահայերին բռնի ռուսացնելը, մօտ կամ հեռու ժամանակի ընթացքում։ Ուրեմն, մենք այլեւս ոչ միայն ոչ մի յոյս չը պէտք է ունենանք ռուսի բարեացակամութեան վրա, այլ նրան պէտք է նկատենք մեր ազգային գոյութեան մի կատաղի ու զօրեղ թշնամի, ու պատրաստ լինենք այդ գազանի տալիք հարուածների հակահարուածը տալու։

Ռուսահայը իր վերջին ըմբոստ դիմադրութիւնով որոշեց իր դիրքը ռուս կառավարութեան հանդէպ ու պատռեց այն արհեստական մշուշը, որի մէջ թաղված էին դժգոհ հպատակների և գազան բռնակալի յարաբերութիւնները։ Այսօր անորոշութիւնը, տարտամ վիճակը այլեւս գոյութիւն չունի։ Մի կողմում, ժանիքները բաց կանգնած է ռուս բռնակալութիւնը, միւս կողմում ռուսահայը. մէկը ուզում է կլանել, միւսը աշխատում է չընկնել այդ ամենակուլ կոկորդի մէջ։

Հայ ժողովրդի իսկական պայքարը կարծես հիմա է սկսվում. սուտերի մէջ թաքնված ամենամեծ թշնամին ժամանակը յարմար համարեց այլեւս լոյսի մէջ իր դաժան երեսը ցոյց տալու, և մեզ սարսափեցնելու։ Մեզ թըւում է թէ ռուս դիւանագէտները մի քիչ շտապեցին. սակայն այդ շտապումը յամենայն դէպս մեզ հայերիս համար օգտակար է. որովհետեւ մեր մէջ դեռ շատերը կային որ այդ գազանից բարիք էին սպասում։

Բայց ներկայ պարագաներում մենք բացարձակ կռիւ չենք կարող յայտարարել Ռուս կառավարութեան, որովհետեւ այդ մեր ուժերից շատ վեր է. և այդ բացարձակ կռւով մենք պատճառ կը տանք ջնջելու հայութեան մի ստուար մասը, որի ոչնչացումը կործանաբեր հետեւանք պէտք է ունենայ և մեր Տաճկաստանի դէմ մղած պայքարի համար։

Ուրեմն ի՞նչ պէտք է անենք Ռուսահայերս։ Այսօր չունենք դպրոցներ, նրանք յափշտակված են. չենք կարող նուէրներ տալ մեր եկեղեցիներին և սրբավայրերին, որովհետեւ այդ նուէրները էլ կը յափշտակվեն. չենք կարող ընթերցարաններ բանալ, բարեգործական հաստատութիւններ հիմնել. վերջապէս ոչ մի հաստատութիւն, որի բարգաւաճման համար կարողանայինք հոգալ, ու նուիրել մեր մտաւոր, բարոյական ու նիւթական ուժերը։

Բայց անվիճելի ճշմարտութիւն է որ, երբ մի ժողովուրդ հնարաւորութիւն չունի իր մտաւոր, բարոյական ու նիւթական ուժերը ի նպաստ հանրութեան գործ ածել, նա հետզհետէ բթանում, փչանում ու անհետանում է։

Այդ վտանգից զերծ մնալու համար Ռուսահայը այսօր միայն մի միջոց ունի. իր ուժերը նուիրել հայ յեղափոխութեան։ Ամեն մի Ռուսահայ այսօր պարտաւոր է իր դրամական, բարոյական և մտաւոր ուժերը նուիրել Տաճկահայ յեղափոխութեան, որովհետեւ մեր թշնամիներից հասած ծանր և կործանարար հարուածները փաստում են, որ մեզ փրկողը, վերջնական կորստից ազատողը միայն ազգային անկախութիւնը պէտք է լինի։

Ուրեմն Ռուսահայը այսուհետեւ դպրոցի, հիւանդանոցի, դասագրքի, եկեղեցու, մոմի տալիք դրամները միայն և միայն անկախութիւնը ձեռք բերելու միջոցներին պէտք է նուիրէ։

Ոմանք ասում են որ Կաթողիկոսական աթոռը այս ինչ տեղը կը փոխադրենք, նուէրները այսուհետեւ կը տան Տաճկաստանի, Պարսկաստանի և այլ տեղերի հայ հաստատութիւններին։ Աննշան մխիթարանք։

Այդ տեղերում էլ կարող են նոյն փորձանքները պատահել։ Ո՞վ կարող է մեզ երաշխաւորել թէ նոյն լրբութիւնը չեն ունենայ և միւս կառավարութիւնները. չէ՞ որ մենք տեսանք թէ վայրենի Լէնկթիմուրի չարածը արաւ Նիկոլա Բ.ը 20րդ. դարում։

Ո՛չ, Ռուսահայը այսօր մի բան ունի անելիք. իր բոլոր ուժերը նուիրել Տաճկահայ յեղափոխութեան և իր ներքին դիմադրութեան. եթէ նա չի ուզում իր գոյութիւնը ոչնչացնել աննպատակ և անպատիւ կերպով։ Եւ Ռուսահայ մինչեւ օրս թմրած ինտէլիգէնցիան, եթէ քաղաքացիական պատւի ամենաչնչին ըզգացմունքն անգամ մնացել է նրա մօտ, այդ ուղղութեամբ միայն պէտք է աշխատէ։

Ռուսահայ ամբոխը իր վերջին ըմբոստութիւններով ցոյց տւեց որ նա այլեւս պատրաստ է զէնքով իր իրաւունքները պաշտպանել. նա ցոյց տւեց այդ սպասածից էլ աւելի մեծ չափով ու զօրեղ կերպով։ Եւ այդ ըմբոստութիւնները մոլեռանդութեան արդիւնք չեն, այլ ազգային գոյութեան սպառնացող վտանգի նախազգացման։

Հոսանքը պատրաստ է և նրան միայն նպատակայարմար ուղղութիւն պէտք է տալ. և այդ էլ պարտաւոր է անել Ռուսահայ երիտասարդութիւնը։

ՎԱՐԴՕ

ՎԱՌՆԱՅԻ ԳՈՐԾԵՐ

Շաբաթներէ ի վեր Վառնայի պատգամաւորի ընտրութիւնը յետաձգված է. որ և վերջապէս վաղը պէտք է տեղի ունենայ։ Այդ ընտրութիւնը պատճառ եղաւ որ մի շարք միամիտ մարդիկների փոքր ի շատէ արդարացի պահանջները մատի փաթթոց անելով մի կարգ անպիտան մարդիկ ճիգեր թափեն Վառնայի հայ հասարակութեան մէջ իրարանցում գցելու, իրանց խախտուած դիրքը վերահաստատելու համար։

Յարձակումների գլխաւոր նըպատակակէտը դարձաւ Վառնայի թաղական խորհուրդը, մանաւանդ նրա երկու անդամները, որոնք մեղք են գործել Վառնայի դպրոցները և եկեղեցին պարտքից ազատելով, կանոնաւոր հաշուետոմար պահելով, որը երբէք գոյութիւն չէ ունեցել ո և է թաղական խորհրդի ժամանակ, ու եկեղեցին օժտելով մի քանի հազար ֆրանկ կանխիկ դրամով։

Այսօր անուրանալի ճշմարտութիւն է, որ Վառնայի ներկայ թաղական խորհուրդը, իր բոլոր պակասութիւններով հանդերձ, աւելի օգտակար է եղել մեր հասարակական հիմնարկութիւններին, քան ո և է թաղական խորհուրդ. բայց մի արարած որ իր մէջ մարմնացրած է Թրքական ամբողջ վատ յատկութիւնները, հասարակութեան համար մի սանտիմ օգուտ չէ բերել, հայ կոչվելու պատւից վաղուց զրկված

է, յանդգնում է արատ բերել այնպիսի մարդկանց, որոնց Շէֆքիների հետ համեմատելը բացարձակ անխղճութիւն կը լինէր։

Բայց այդ արարածները չեն որ մեզ զարմանք են պատճառում իրենց սորութիւններով, այլ Վարնայի հայ հասարակութեան այն փոքրիկ մասը, որը երեխայի նման գործիք դառնալով երբեմնի գող թաղականների և բաշիբոզուկ ու հրապարակագրի անուան անպատուութիւն բերող սոֆթայի ձեռքում, սպառնալիքներ են կարդում այս ու այն կողմ, և միմոսական ճիգեր են թափում ճնշում գործ դնել Վարնայի հայ հասարակութեան զանգուածի վրա՝ իրենց գռեհիկ ու վայրենի պահանջները առաջ տանելու համար։

— Արիւն պիտի թափի. մեր ուզածը պէտք է ըլլայ: ժողովուրդը ատանկ կուզէ. խօսում են այդ ողորմելիները փողոցի անկիւններում, ընտրողներին սարսափեցնելու համար։

Արիւն պիտի թափի... խեղճեր. Դուք ու՞ր, արիւնը ու՞ր. կարծում էք որ սոֆթայի սպառնական յօդուածները և ձեր դարէն պիտի թափի» խօսքերը բաւ են այն մարդկանց սարսափեցնելու, որոնք գիտեն թէ ձեր երակներում ձկան արիւն է հոսում։

Արիւն թափել էք ուզում, առէք ձեր սոֆթա չէլլը և ճամբայ ընկէք Հայաստան. արիւն թափելու տեղը այնտեղ է։

Թողէք ձեր այդ սպառնալիքները. դրանք ձեր կերպարանքին ու նկարագրին յարմար բաներ չեն. վաղը, պատուաւոր մարդկանց պէս, մօտեցէք քուէատուփին և կատարեցէք ձեր պարտքը, ընտրեցէք որին կամենում էք, որովհետև այդ ձեր արդար իրաւունքն է. բայց միամտութիւնը մի ունեցէք արիւն թափելու տրամադրութիւններով մտնելու եկեղեցւոյ բակը կամ դպրոցը, որովհետև այդ տրամադրութիւնները միայն ձեզ համար վնասաբեր կը լինեն։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ ապագայ Առաջնորդական թեկնածու Տ. Ներսէս Ասլանեան Սրբազանի

— —

(Շար. նախորդ թիւէն)

Եւ սակայն այսչափ գործօն մարդիկ ընդերկար չեն թողուր միեւնոյն պաշտօնին վրայ եւ յաճախ բրաբիոն ձեռքէ կը խլեն։ Քիչ մը տափակ ըլլալու է մարդ ընդերկար մնալու համար տեղ մը։ Եւ Զմիւռնացիք իրենց նախորդ առաջնորդին կաթողիկոսական արժանաւորութիւնը չը յիշեցնող՝ մոռցնող աւելի բարձր արժանաւորութիւն մը փնտռած ատեննին եկեղեցականներու վրայ, գտան բացառիկ գլխք մը միայն Ասլանեան Ներսէս Ծ. Վ.ի անձին մէջ զոր նոյն ընտրեցին հրաւիրեցին ի հովուութիւն Թուրքիոյ առաջին ազնուապետական ու հարուստ վիճակին ինչպիսին է Զմիւռնիա։ Երբեք սխալած չէին այս ընտրութեան մէջ, ինչ որ չեչտուեցաւ մանաւանդ Մելքիսեդեկի երկրորդ առաջնորդութեան ատեն։ Պոլսոյ թերթեր օր օրին Ներսէս Ծ. վարդապետի ի Զմիւռնիա գործունէութեան արձագանգը եղած ըլլալուն գանց պիտի ընեմ մանրամասնութեանց մտնել:

Միայն թէ ինչպէս Նեղոկիացիք նոյնպէս Զմիւռնիացիք եպիսկոպոսական վկայական տուին Ասլանեան վարդապետին, սակայն ոչ մին եւ ոչ միւսը հակառակ ի Զմիւռնիա տասնամեայ պաշտօնավարութեան՝ արժանի չեղան ընդունելու իր եպիսկոպոսական օրհնութիւնն որ վիճակեցաւ գառաջինն վանեցւոց, ուր ծառայութեանց փառապսակը բոլորեց. եթէ անկէ լաւագոյն եւ անկէ դժուարայաղթ պաշտօնի մը վերապահուած չըլլայ յետ այսօրիկ իր փորձ՝ անկեղծ՝ պերճաբան կարողութիւնը աստուածային բարեբարութենէն։ Զմիւռնիայէն արդէն վերջին կաթողիկոսական ընտրութեան համար պատգամաւոր գնացած ատեն շատեր համակրած էին այս պարզ այլ կարող եկեղեցականին։ Կրկնապատիկ ընդունելութեան արժանացաւ երբ Գաբրիէլ Ճէվահիրճեանի՝ Պոլսոյ արդի պատր. փոխանորդին հետ եպիսկոպոսութեան գնաց Էջմիածին եւ շատ խօսուեցաւ երկու հակոտնեայ ծայրայեղութիւններու վրայ—Ներսէս սրբազանի, որ լուրջ՝ կարող՝ պերճախօս՝ բարի եւ ազնուական անձնաւորութիւն մըն է եւ Գաբրիէլ սրբազանի, որ անճարակ ու անբարբառ անձ մըն է—այն ամեն տեղեր, ուր իջան, եղան առնք եւ ուր հետաքրքիր բաղդատութիւն մը համախոհուեցաւ պատուելու. համար Թուրքիայի հօս-հօս կլերը որուն վրայ մեծ հաւատք ունին մեր [illegible] եղբայրները։ Ներսէս նորապսակ եպիսկոպոս Բագուէն եւ ուրիշ քաղաքէ մը հրաւիրուեցաւ իր նախընծայ օրհնութիւն տալու եւ իր նախանձայոյզ բերնէն թափելու [illegible] բարկութիւնը ազնուական ու հարուստ մեղաւորներու ականջին հնչեցնելով զոռ ու անկեղծ չեչտերը իր բնատիպ քարոզութեան։ Գաբրիէլ սրբազան չունէր բան մը ցուցադրելիք, ուստի փութաց վերադառնալ։

1898ի հոկտեմբերին էր, Պոլիս հասաւ թէ ոչ Ներսէս սրբազան, իմացաւ թէ Վանը իր ծովէն աւելի փոթորկայոյզ էր, որը հանդարտեցնելու համար մտադրութիւն կայ զինքն իբրեւ Ցովնան ծովը ձգել.—Կաթողիկոսութիւնը կը գործէր Բէր ը ֆրանսի փոխ հիւպատոսութեան տակ որ մեծաւորն ալ էր տեղւոյն միսիոնարներուն. ամէնն ալ երկար ատենէ ի վեր ամուլ կերպով հոն հաստատուած։ Սով մը որ յաճախադէպ է այդ կողմեր՝ հաղորդակցութեանց դժուարութեան պատճառաւ, առիթ տուած էր կամ քայքէն կակուղ ունեցող կամ Պապին հողաթափը համբուրելու յանձնառու ըլլալ, տարիք եղած էր նաեւ այս միսիոնարներուն propaկանդային կամ կ'օծածաւալութեան։ Անօթութիւնը, ընտանիքի ու զաւակի սէրը, բացուած պանդուխտներու առթած անձկութիւնը տկարացուցին այդ բազմահոյ թեմին ուղղափառներուն հաւատքը եւ ի մնէ յարուցած այդ ժողովուրդը մէջն մը ընտրած էր կրօնական խիղճը՝ անայխատ ապրելու եւ իր դաւանոր աւանդութիւններն ու ազատութիւնը կը ծախէր լաւ եւ շատ վճարողին։ Այս խառնակ վիճակը նոյնչափ գործին կուգար քաղաքական գործիչի մը Տր. Ռէյնոլցի որ 25-30 տարիներէ ի վեր անընդհատ հոն վարած էր ամերիկեան բարձրագոյն վարժարան մը եւ որբանոց մըն ալ այս առթիւ բացած էր, թէեւ յանկարծ վարժարանին ուսուցիչներէն եւ Ներսէն ու դուրսէն՝ կամ ինչպէս կըսենք, կանակէն ապրող մի քանի անձերէ զատ՝ ոչ ոք յաջողած էր տիրոջ բանին ունկնդիր ըլլալ եւ Հայ. եկեղեցւոյ դժոխք չըլլալ.—այսչափ ամուլ անցած էին իր բողոքական ջանքեր եւ յումպէտս վատնուած ամերիկայի կլորիկ տոլարները։ Ան ալ առիթը եկած համարելով հիւանդանոցի պէս բան մը հաստատեց, նպաստ բերաւ ու իբր թէ անխտիր բաժնեց, մինչ ստոյգ է թէ բազում անօթիներ նախ կ'ունկնդրէին իր յորդորներ աղօթող քարոզները—ուր կիմանային թէ Հայ. եկեղեցիին անդամ ըլլալնուն համար աստուածային պատուհասներու արժանի եղած էին—եւ ապա իրենց օրապահիկը կառնէին։

Քաղաքական հանգամանքով Վանը ամենէն փափուկ կէտն է, ուրկէ նախկին տեղապահ Ներսէս Սրբազանի աչքին առջեւ Պոլիս արգելափակ կը մնար։ Բաց ասոր՝ վիճակին մեծութիւնը և սովին առջեւ առնելու համար ալ քարոզչութենէն աւելի դրամ մը պէտք կ'ըլլար և այս էական ապրանքին չափ անհաշտ քանակով մը կեդրոն. վարչութեան զինք ճամբայ հանելու եղաւ, զինք՝ զՆերսէս Սրբազան բաւական տատամսեցուցին՝ յուսահատեցուցին և յորդորական քննադատութեանց ու գիտողութեանց տեղի տուին։ Սակայն իր եկեղեցւոյ կանխ յանկարծ անդորր համբաւը Աստուծոյ վրայ իր հաւատքը և կեդրոն. վարչութենէն իրեն քիչ մը աւելի լայն բացուած վարկը և տրուած օգնական մը Վահրիճ Վ. Շահլամեան զինք համոզեցին՝ զօրացուցին և յուսադրեցին ի վերջոյ պարզերես ելլելու այս չարիքն աւելի բարդ՝ կնճռոտ փշալից ու վտանգ պաշտօնին մէջէն ալ և իբրեւ ցոյց տուին թէ չխաբուեցաւ իր գուշակութեան մէջ։

1899ի մայիսի 20ը նշանաւոր թուական մը եղաւ Վանեցւոց համար, որք նմանը չը տեսնուած փառքով ու հանդիսաւորութեամբ մը կառավարական պաշտօնակից ու հիւպատոսական մարմինոյ կողմէ դիմաւորուած տեսան իրենց այցելու հովիւը, քաղաքէն 3-4 ժամ հեռի, մինչեւ Ալիւր գիւղը։ Վեհապետի մը մուտքը տարբեր չէր կրնար լինիլ իր մայրաքաղաքը. Զինուորական պատիւներ, կա-

---

ՓՇԵՐ ՈՒ ՎԱՐԴԵՐ

(8)

ՆՈՒԷՐ Ս. Զ.—ԻՆ

ԳԼՈՒԽ Բ.

Շուշանը դեռ իր խօսքը հազիւ էր վերջացրել, երբ սենեակի դուռը բացվեց եւ ներս մտաւ Հայաստանցի մի ծերունի։ Նա խոնարհաբար բարեւելով սենեակում գտնվողներին, գլխեց տան տիրոջ, գրեթէ լալով.

—Էֆէնտի, կաղաչեմ, կը պաղատիմ, մէկ հատիկ զաւակս երկու օր է որ մեռած է. ոչ մէկ քահանայ կը համաձայնի թաղել, որովհետեւ դրամ չունինք։

—Բայց ես քեզ ասացի որ դիմես տէր Կարապետ քահանային. նա երիտասարդ է եւ լաւ մարդ է. անպատճառ առանց դրամի կը թաղէր, պատասխանեց տան տէրը։

—Դիմեցի, դիմեցի, ան ալ մերժեց. ճիշդ է երիտասարդ է, նոր մարդերէն կերեւի, բայց հիներէն այն տարբերութիւնը ունի միայն, որ կոշտութեամբ չի խօսիր, ձայնը անուշ կը հանէ, միշտ կը խնդայ, տեղի անտեղի։ Ան թէեւ չը մերժեց. բայց ըսաւ որ այսօր ժամանակ չունի, զբաղած է։ Բայց ես հասկցայ որ այդ մերժել կը նշանակէր, որովհետեւ ինձ լսելէն վերջը իսկոյն ըսաւ.—Ինչպէս կերեւի դրամ չունես. որ միւս քահանաները չեն համաձայնիլ թաղելու։ Ու երբ իմացաւ թէ դրամ չունիմ, այն ատեն միայն ըսաւ, որ ինք ալ զբաղած է։

—Տէրուկը շատ ճիշդ է հասկացել. այդ տէր Կարապետը շատ կեղծ տիպ է երեւում. Նրա ժպիտները ինձ էլ չեն դուր գալիս, թէեւ մշակական է հռչակված եւ մշակականների ջերմ պաշտպանեան է։ Պարզ է էլի. ինչ գործ կարող էր ունենալ, որ չը կարողացաւ այս ծերունու մեռելին թաղել, կրթված մարդի հռչակ էլ ունի, համակրում է եւ յեղափոխութեան քահանայ է դարձել իբր թէ ժողովրդին օգտակար լինելու համար. բայց բոլորը սուտ. ծոյլ մարդ է, որոշել է առանց ուղեղը եւ մարմինը յոգնեցնելու ապրուստի միջոց գտնել եւ քահանայ է դարձել. իր սովորական դառնութեամբ նկատեց Շուշանը եւ դառնալով գաղթական ծերունուն, շարունակեց.—Ինչու առաջնորդին չը դիմեցիր։ Նա անպատճառ ոեւէ քահանայի կը հրամայէր որ մեռելը վերցնեն։

—Դիմեցի, էֆէնտի, արեւիդ մեռնիմ, դիմեցի, գացի առաջնորդարանը, բայց ներս չառին, ծառան վռնտեց զիս. յայտնելով որ այդ առաջնորդին գործը չէ. պէտք է դիմեմ իմ ապրած թաղին եկեղեցւոյ աւագ քահանային կամ թէ երեսփոխին։

Երկու ամբողջ օր է որ [illegible] տունէն կը քալեմ. մեռելը տունը դրված է կինս, հարսս, պզտիկները լալէն մեռան։ Ես ալ չեմ գիտեր թէ ինչ նեմ. կաղաչեմ, կը պաղատիմ, ոտքերնիդ պագնեմ, ազատեցէք զիս այս վիճակէն. ալ առանց քահանայի տուն չեմ կրնար երթալ. մեռելէն անգամ կամչնամ. կը կարծեմ թէ զիս պիտի անարգէ, որ հոգնարք չեմ գտնար զինքը տեղաւորելու...

—Հանգստացիր, հայրիկ, միջամտեց կոյր Պետրոսը, նստիր մի քիչ ես հիմա քեզ հետ կըգամ, քահանայ կը գտնենք եւ կը թաղենք։ Մի յուզվիր, մեղք ես, դու ծերունի մարդ ես. քո առողջութիւնդ հիմա կնոյդ

առավարութեան նուագախումբին կողմէ պաշտօնական նրգեր, համօրէն մեծամեծերու կողմէ յարգանաց ծայրայեղ արտայայտութիւններ. Ցովսէփ եպիսկոպոս՝ 10է աւելի վարդապետներ, 30է աւելի քահանաներ, ամբողջ ուսուցիչները քաղաքին ամէն փողոցի անկիւն կարգ ըստ կարգէ կեցուցած իրենց վարած վարժարաններու աշակերտներ, բովանդակ խառն ազգաբնակութիւն՝ քաղաքը անանցանելի՝ տօնական արտակարգ հանդիսաւոր օրի մը վերածեցին, որուն նմանը հաւաստեցին թէ տեսնող չէ եղեր Վանի մէջ։

Այցերը՝ որ սրուեցան տեղական կառավարութեան և պաշտօնատար մարմնոց ու մեծ պետութեանց ներկայացուցչաց՝ բացի Ֆրանսականէն — հակառակ փոխ-հիւպատոս Բեռ տը Ֆլանսի օր առաջ գալուն և գիրկընդխառն ողջունելուն — այնպիսի խորին տպաւորութիւն մը գործեցին որ Վանի կուսակալը որ երբեք այցելութիւն չէր տուած՝ ինչպէս իր նախորդները Ազգային Առաջնորդարան, ստիպուեցաւ անձամբ թուով պաշտօնէից և մեծամեծաց թափորի մը գլուխ անցնելով փոխանորդի այցելութեան գալ այն տան մէջ, որ Ներսէս Սրբազանի համար յատկապէս կահաւորուած էր իբր բնակարան՝ առաջնորդարանի մօտ։

Բայց մինչ այս մինչ այն, գործերը սկսան և նպաստի ցունդագունդ գեմողները ծնուցին Վանեցի ջոջերու շահագէտ վոհմակ մը, որուն դէմ Ներսէս Սրբազան չքաշուեցաւ իր անկեղծ ու պարզ քարոզներուն մէջ մահացու սլաքներ արձակել և գործի ասպարէզը մէկիկ մէկիկ յանձնել նուաց շահագէտներու, մերկապարանոց խայտառակելով սովեալներու հացին աչք տնկող անխիղճները։ Մեծագաներու օրհասականը հնչած էր, ալ գոյութեան պայքար մը սկսան մղել այս աննուաճ մարդուն դէմ։ Գարամանեան՝ Միրզախանեան և Թերզիպաշեան այն երրորդութիւնն էին պատուհասներու, որոնցմէ Վանի համայնքը կը սարսէր և ասոնց հասցէին խօսք չմնաց ըրաւ՝ որոնցմէ գոռաց կենց և դիմակազերծ՝ ամենուն առջեւ զզուելի ցոյց տուաւ։ Ժողովուրդը շունչ առաւ. «Այս հայ ջոջերը աւելի դժբաղդ ըրած են ժողովուրդը, քան օտարները իրենց հարստահարութեամբ» ու մենք գիտենք թէ ո՛րչափ լաւ ուսումնասիրած էր բարքերը տեղւոյն վրայ։

(Տարուանկեցի)

ԼՈՒՐԵՐ ԿՈՎԿԱՍԷՆ

«Պրաւիտէլստվէննիյ Վէստնիկ»ում տպագրված է հետեւեալ կառավարչական հաղորդագրութիւնը. «Օգոստոս 29ին Գանձակում տեղական հայերի մի խումբ անկարգութիւններ կատարեց 1903 թուականի յունիսի 12ին տեղի ունեցած Բարձրագոյն հրամանի առիթով՝ հայոց եկեղեցական կալուածները քաղաքացիական իշխանութիւններին յանձնելու վերաբերմամբ. Կանչված զօրքերի վրա հայերը սկսեցին քարեր գցել և վիրաւորեցին երեք զինուորների. Անկարգութիւնները դադրեցնելու համար զօրքերը ստիպված էին գործ դնել հրազէնք, որից յետոյ ամբոխը ցրվեց, թողնելով անկարգութիւնների տեղում 7 սպանվածների և 27 վիրաւորվածների։— Օգոստոսի 31ին, Թիֆլիսում, պատարագից յետոյ հայոց մայր եկեղեցում, հոգեւորականութիւնը եկեղեցու գաւթում, երկու հազար հոգու բաղկացած ամբոխի ներկայութեամբ, հոգեհանգիստ կատարեց այն վեց անձերի յիշատակին, որոնք սպանված էին Գանձակում, այնտեղի հայերի յարուցած անկարգութիւնների ժամանակ. Հոգեհանգստից յետոյ Տէր Արարատեան քահանան նզովք կարդաց եկեղեցական կալուածների առման համար. Նոյն այդ ժամանակ գրվում էին յեղափոխական կոչեր. Ամբոխը աղաղակում էր, գցում էր քարեր և մօտաւորապէս 40 անգամ հրազէնք պարպեց ոստիկանութեան պաշտօնեաների վրա. Վերջինները պատասխանում էին օդի մէջ հրազէնք արձակելով, որի ժամանակ սակայն մի քանի հոգի ամբոխից վէրքեր ստացան. Մի բանւոր մահացու վէրք ստացաւ. Ոստիկանական պաշտօնեաներից մի քանի հոգի թեթեւ վէրքեր ստացան քարերով. Մէկը սպանվեց. Անկարգութիւնների տեղը կանչվեցին կօզակներ, որոնք և ցրվեցին ամբոխը՝ ձերբակալելով անկարգութիւններ սկսողներին, որոնց թւում և Տէր Արարատեան քահանան»։

—Աստրախանի մէջ երբ կառավարութիւնը սկսել է եկեղեցական կալուածները գրաւել, երկու հայ քահանաներ ուզած են պաշտօնեաներին օգնել. Թեմական առաջնորդը այդ եղելութիւնը իմանալուն պէս իսկոյն քահանաներին զրկում է քահանայագործութեան իրաւունքից. իսկ Վեհափառ Կաթողիկոսը այդ երկու գիւրահաճ քահանաներին կարգալոյծ է անում։

Օգոստոս 12ին երբ Շուշում կառավարական պաշտօնեաները սկսում են գրաւել հայ եկեղեցական կալուածները հայ ամբոխը փորձ է անում ընդհատել այդ գործողութիւնը.

Կալուածների ընդունելութիւնը վերջանալուց յետոյ, ամբոխը չափազանց գրգռուած իսկոյն գնում է կառավարչի տան առաջը. Ոստիկանութիւնը և յիսուն չափ կօզակներ աշխատում են ամբոխը հեռացնել. ամբոխը նրանց դիմաւորում է քարերով և ատրճանակի հարուածներով. Հարեւան տներից, պատշգամներից և տանիքներից էլ քարեր և գնդակներ են տեղում.

Կօզակները նոյնպէս հրազէն են պարպում և ամբոխին ցրվել ստիպում. Վիրաւորվել են են երկու կօզակներ. ցուցարարներից Մէկը սպանվել է. Գիշերը վրա հասնելու պատճառով անկարելի է եղել ստուգել վիրաւորված հայերի թիւը։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Նիշուէ 18 Սեպտեմբեր 1903

Տեղիս հայ գաղթականութեան թիւը այժմ հարիւրի կը հասնի. մեծաւ մասամբ կաշխատին կօշիկի գործարաններու մէջ. ունին մէկ սափրիչի խանութ և երկու ալ մանրավաճառի, գրադարանի և որբախնամ ընկերութիւններ. Որբախնամ ընկերութիւնը, որ ժամանակէ մը ի վեր կազմալուծուած էր, Օգոստոս 2ի կիրակին կրկին վերահաստատուեցաւ և ունի այժմ 20ի չափ անդամներ. Օգոստոս 23ի կիրակին հրապարակային ժողով մը ունեցաւ և Զէյթունի որբիկներուն համար հանգանակութիւն մը կատարեց. գումարը հասած է այժմ 37 տոլարի. այս դրամը ժողովի որոշումով պիտի ղրկուի Ակարճեան Եպիսկոպոսին որ ղրկէ իր նպատակին։

Այս գաղութը ազգային տեսակէտով ալ վար չմնար ուրիշ հայաբնակ քաղաքներէ և կրնամ ըսել որ՝ հակառակ իր թւոյն փոքրութեան՝ զանոնք կը գերազանցէ, ինչպէս որ ցոյց տուաւ անցեալ տարի Հ. Յ. Դաշնակցութեան մէկ հանգանակութեան առթիւ. Հոս կայ երկու մարդասպան (Հին և Նոր հատուած) Մասնաճիւղեր և Դաշնակցական Կոմիտէ մը. Դաշնակցական Կոմիտէն իր հրապարակային ժողովը ունեցաւ սեպ. 13 կիրակի օր. խառն բազմութիւն մը փութացած էր ներկայ գտնուելու. Ժողովը բացուեցաւ „Մեր հայրենիք թշուառ անտէր“ երգով. առաջին ատենախօսը եղաւ Պ. Ս. Ռըստիկեան, որ նախ բացատրեց թէ ինչու՞ համար այսպիսի հրապարակային ժողովներ կըլլայ և պիտի ըլլայ. և յետոյ յուզուած շեշտով մը ծանրացաւ Հայաստանի ներկայ տագնապալից կացութեան վրայ. մասնաւորապէս շեշտեց այն կէտը թէ՝ Բաւական է որքան խօսեցանք. պէտք է որ խօսքը գործի վերածուի, որովհետեւ միայն խօսքը բաւական չէ. պէտք է անոր հետ կապուի նաև գործը ու դառնալով ալ կուսակցականներուն ըսաւ. «Բաւական է որչափ հեռու մնացիք հայ ազատագրութեան գործին հանդէպ. ժամանակն է որ քիչ մը մօտէն քննէք յեղ. գործերը ու անոնց ձեռք երկնցնէք. ու՞ր են այն մարդիկը, որոնք հուզէին ճաց տալ հայ ժողովրդին. ու՞ր են այն մարդիկը, ո-

---

հարսից եւ թոռներից պէտք է։

—Ինչպէս հանգստանամ, զաւակս, ես ալ ժամանակ մը մարդ էի. ուժ, պատիւ ունէի մեր գեղին մէջ. Ես անձնասպաններ անգամ թաղել տուած եմ այդ սեւազգեստներուն: Բայց այսօր ես մեռել ունիմ, եւ թաղել տալ չեմ կարող. Անոր համար ըսած են թէ ամեն քար իր տեղը ծանր կըլլայ. Թալանին դիմացանք, աղքատութեան դիմացանք, բայց շատ դժուար կուգայ երբ մեռելը երկու օր տունը կըմնայ, որովհետեւ քանի մը փարայ չունինք տէրտէրոջ տալու. Օխ՝ փալա՛կ, օխ՝ փալա՛կ. Սուլթան Համիտի արեւը սեւնար որ մեզի այս օրէն չը հասցնէր. Բայց Սուլթանն ալ մեղաւոր չէ. մեղաւորը մենք ենք, որ թողինք մեր տուն տեղ եւ թափառական դարձանք. կամ հոն մեռնելու էինք, կամ մեր երկրէն չէինք չարժելու. ինչ կըլլար կըլլար, գոնէ պատւով կը մնայինք։

—Ճիշդ է, հայրիկ, առարկեց Շեռոեանը, բայց հիմա այդ խորհրդածութիւնների ժամանակը չէ. հիմա պէտք է աշխատել քո այդ վերջին ցաւին դարման գտնել. Ինչպէս ասաց մեր ընկերը, դու մի քիչ հանգստացիր, մենք շուտով քեզ համար թէ տէրտէր կը գտնենք եւ թէ միասին կըզգանք մեռելը վերցնելու։

—Շատ շնորհակալ եմ զաւակներս. Աստուած ձեզ ձեր ծնողներէն անպակաս պահէ. Մէկ բան մըն ալ կը խնդրեմ ձենէ. Սիրտս առաւ, որովհետեւ տեսայ որ դուք բարի ծնունդներ էք. հօր մը աստապանք կը հասկնաք. Կարմիր դագաղ մըն ալ ճարեցէք տղուս համար. Իմ մէկ հատիկ, սիրասուն զաւակս էր. դուք չէք գիտեր թէ ես զայն ինչպէս եմ մեծցուցեր. Հարսնիքին երկու եզ մորթեցի, գիւղի բոլոր աղքատները քէյֆ ըրին, կերան, խմեցին, ուրախացան։

Առանց դագաղի խեղճը ինչպէս պիտի պառկի այն ցուրտ հողին տակը։ Գիտեմ ատոնք բոլորը դատարկ բաներ են. իմ սիրասուն մեռեալս չը պիտի ողջննայ, բայց ինչ ընեմ, հայրական սիրտ է. ատով քիչ մը կը հանգստանայ. եթէ ճիշդը կուզէք, այս խնդիրը այնչափ ալ իմ հանգստութեանս համար չէ, որչափ խեղճ մօրը եւ երիտասարդ կնոջը։

—Շատ լաւ, շատ լաւ հայրիկ, դագաղը ես կը գնեմ, միջամտեց տան տէրը։ Խօսքը դեռ չէր վերջացել, երբ ծերունին արտասունքն աչքերին, բայց ժպտութեամբ վրա ընկաւ երիտասարդների վրա, սկըսեց մէկ մէկ նրանց ճակատներն համբուրել Կրկնելով. «Օ՛հ, աշխարհը այնչափ ալ գէշ չէ եղած, սրտի տէր մարդիկ ալ կը գտնուին եղեր։ Երթանք, երթանք միասին, ես հանգստանալու պէտք չունիմ. Ներողութիւն, եթէ գործ ալ ունիք, այսօր իմ խեղճ զաւակիս, իմ սգաւոր ընտանիքիս համար յետաձգեցէք։

Երիտասարդները չը կարողացան մերժել. իսկոյն գլխարկները վերցըրին ու ծերունու հետ տանից դուրս եկան։

Ծերունին ճանապարհին շարունակ իր մեռած զաւակի մանկութեան մասին էր խօսում. Իսկ երիտասարդները մխիթարում էին ասելով որ թոռները կը մեծանան եւ մեռած Գեւօի տեղ կը բռնեն ու կը մխիթարեն թէ իրենց պապին ու մամին եւ թէ իրենց մօրը։

(Տարուանկեցի)

րոնք կուզէին զէնք տալ ու ո՞ր ատոր կըսպասեն ինչու՞ համար այսչափ անտարբեր կը գտնուին այսպիսի ճգնաժամային պարագաներու ատեն. ա՛հա, այսօր հայ յեղափոխականները իրենց կրցածը կ'ընեն և պէտք է որ ոչ կուսակցականներն՝ իրենք ևս օժանդակեն անոնց. թէ նիւթականապէս թէ՛ բարոյապէս և քաջալերեն ու խրախուսեն այն ափ մը կռուող քաջերը, որոնք այսօր թշնամիին կուրծք տալով կուզեն իրենց կեանքը սուղի ծախել, հայ գեղջուկին պատիւր փրկելու համար»։

... Պ. Ց. Դասպարեան երգեց «Սփիւռք սէգ սարին» երգը. Երկրորդ ատենախօսը եղաւ «Հայրենիք» թերթի խմբագիրը՝ Պ. Ա. Վռամեան, որ խօսեցաւ ժամէն աւելի գրեթէ. իր սովորական յուզիչ ու տրամաբանական խօսքերով յուզեց ժողովուրդը. խօսեցաւ Մակեդոնիոյ ներկայ ապստամբական շարժումին մասին և բացատրեց թէ ինչու համար հակառակ Մակեդոնացիներուն ըրած հերոսական կռիւներուն, Եւրոպական պետութիւնները լուռ կը մնան այսչափ և ըսաւ որ պատճառը շատ պարզ է. որովհետեւ Մակեդոնացիները բնաւ չաշխատեցան իրենց փրոպագանտը յառաջ տանիլ Եւրոպական շրջանակներու մէջ, որպէսզի միջամտութիւնը շուտ ըլլար, և ատոր համար է որ մենք՝ Դաշնակցականներս միշտ կը ջանանք քաջալերել «Բրօ Արմենիան»: Ցետոյ խօսեցաւ երկրի յեղափոխական գործերու մասին. և ըսաւ որ գործը որ դէն կը շարունակուի երկրին մէջ. կը մնայ միայն անիկա զօրացնել և աւելի ընդարձակել. «Ծառը պտուղէն կը ճանչցուի» առէք այսօր Դաշնակցութեան ծառը և դուք կը տեսնէք անոր վրայ «Խանասորի արշաւանք», «Պանք Օթօմանի կռիւ» և «Առաքելոց վանքի գրաւում» մատնիչներու և դաւաճաններու պատիժ. մինչեւ հիմայ մեր անարժան հակառակորդները իրենց բերնին «ծամոց» ըրած էին Պուլկարի մէջ գողցուած զէնքերու խնդիրը ու այդպէսով կուզէին Դաշնակցութեան վնասել. սակա՛յն ի՞նչ ըրաւ Դաշնակցութիւնը, ա՛հա անիկայ կրցաւ տալ յանցագործին իր արժանի՛ պատիժը: Դաշնակցական աշակերտին Սուրբ դաշոյնը մխուեցաւ անոր կրծքին մէջ և վերջ տուաւ այդ ստոր հային... Եւ յետոյ խօսեցաւ ներկայիս մէջ եղած կուսակցական պառակտումներուն և զեղծումներուն մասին և թելադրեց որ հայ ժողովուրդը բնաւ չի յուսահատի ատոնք պատճառ բռնելով, անիկայ պէտք է ճանչնայ երկրի յեղափոխական գործը միայն, և օժանդակէ անոնց կամ միանալով յեղ. կազմակերպութեան, կամ իրենք իրենց կազմակերպուին և ուղղակի օգնեն երկրի յեղափոխականներուն. ահա առիթը ներկայացած է եւ պէտք է չի փախցնել... Ժողովին ատենապետը ժամանակ տուաւ ժողովրդին որ հարցումներ ընեն ատենախօսներուն. բայց ոև է մարդ հարցում չըրաւ. ամէնն ալ գոհ էին եւ իրենց դէմքերուն վրայ գեղեցիկ ծիծաղ մը կը փայլեցնէին. երգեցիկ խումբի կողմէն «Ի զէն հայեր ի զէն եւ ի հրացան» երգը երգուեցաւ եւ ժողովը փակուեցաւ։

Երուանդ Պօյաճեան

— —

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պուլկար կառավարութիւնը դժգոհ մնացած է խառն յանձնաժողովէն, որովհետեւ Թուրքիոյ խոստման համաձայն չէ։ Թուրքիա համաձայնած էր որ այդ յանձնախումբին անդամներուն կէսը պուլկարներ պիտի ըլլային։

Նախարարապետ Բէթրով այդ մասին յայտնած է Սօֆիայի Թուրք գործակալին, միեւնոյն ժամանակ յայտարարելով որ բանակցութիւնները շարունակելու համար պէտք է իսկոյն ընդհանուր ներում ըլլայ և Թուրք զօրքերը պիտի ետ քաշուին սահմանագլխէն։

«Պուրկազէն «Թանի»ն կը հաղորդեն որ Վառնայի ճամբով Պոլիս գացող նաւի մը մէջ առաջին կարգէն երեք ճամբորդներ ոստիկանութեան մերժած են իրենց պայուսակները քննելու. Վառնայի ոստիկանութիւնը անոնց պագամները խուզարկելով գտած է ժամացոյցի մեքանիզմով լարուած պայթուցիկներ։ Այդ երեքէն երկուքը ձերբակալուած են, իսկ երրորդը փախած է։

— Մակեդոնական յեղափ. կազմակերպութեան Սօֆիայի ներկայացուցիչը յայտարարած է որ ապստամբական մարմինը կարեւորութիւն չի տար Պուլկարիոյ և Թուրքիոյ միջեւ սկսուած բանակցութիւններուն։

Թամթարչէֆ կը կարծէ որ Բ. Դուռը այդ բանակցութիւնները սկսած է միայն ժամանակ վաստըկելու համար, որպէսզի միջոց ունենայ զօրքը համախմբել և պուլկար տարրը բոլորովին ջնջել։

Ու իր խօսքը կը վերջացնէ ըսելով որ միայն մեծ պետութեանց միջամտութիւնը պիտի կարենայ ապստամբներուն գոհացում տալ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Թուրք կառավարութիւնը սկզբունքով որոշած է պուլկարները հեռացնել մեծ քաղաքներէն։

— Նախարարներու որոշմամբ և Սուլթանի հաւանութեամբ խառն ժողով մը կազմուած է, որուն պաշտօնը պիտի ըլլայ Մակեդոնիոյ բարենորոգման ծրագիրը մշակել։

— Անկլիական Վիէննայի «Ցայթ» թերթին կը հեռագրեն թէ Իւսկիւպի Թուրքերը որոշեցին Ցարին Վիէննա հասնելուն պէս քրիստոնեաներուն մեծ ջարդ մը տալ։

— Պոլսէն «Թանի»ն կը հեռագրեն թէ Մակեդոնացիները տեսնելով որ իրենց անչափ զոհողութիւններով անգամ չը կրցին Եւրոպայի միջամտութիւնը յառաջ բերել, յուսահատելով, որոշած են վնասել օտարահպատակներուն, թէ ֆիզիքապէս և թէ բարոյապէս։

Այդ պատճառով Թուրք կառավարութիւնը հսկողութիւնը սաստկացուցած է և զինուորական պահակախմբերը աւելի զօրացուցած է։

ՌՈՒՍԻԱ

Ռուս կառավարութիւնը որոշած է Եւրոպական Ռուսաստանը երկաթուղիի գծով միացնել Պարսից սահմանին հետ. Դերմանացւոց շինելիք Բաղտատի գծին հակազդելու նպատակաւ։

— Լուր կը պատի որ Ցարի ճամբորդութենէն յետոյ Նախարարութեան մէջ կրկին փոփոխութիւններ տեղի պիտի ունենան։

— Մոսկուայի գրաշարները գործադուլ ըրած են։

Գրաշարներու բաթրոնները ժողով մը ունեցեր են և քանի մը հոգի գրաշարներուն պահանջները չափազանցուած գտնելով առաջարկեր են կառավարութեան միջամտութիւնը խնդրել։

Թերթերու հրատարակիչները համաձայներ են գրաշարներուն գոհացում տալ. բայց վերջիններս մերժած են խնդիրը մասնաւոր կերպով կարգադրել, այլ պահանջեր են որ բոլոր բաթրոնները համաձայնին իրենց առաջարկած պայմաններուն։ Այս պատճառով միայն երեք թերթ լոյս տեսեր են։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Մեծ վեզիրը պաշտօնանկ եղած է. Վեզիրը Ռուսական քաղաքանութեան հետեւող էր, հիմա կը կարծուի որ անգլիական ազդեցութիւնը պիտի զօրանայ Պարսկաստանի մէջ։

ԻՏԱԼԻԱ

Միլանի թերթերէն մին կը հաղորդէ որ Նաբոլիի զինուորական իշխանութիւնները ամեն պատրաստութիւն տեսած են Պալքանեան թերակղզին 10,000 զինուոր ղրկելու համար։

— Նոր Պապը դեռ գործով մը չի զբաղիր. շարունակ խորհրդածութեան մէջ է. կը կարծուի որ նախ կուզէ աչէկ մը Վատիկանի գործերուն հետ ծանօթանալ՝ ապա գործի սկսիլ. ինքզինքը շատ պարզ և մերձենալի կը պահէ, այնպէս որ հանդուցեալ Պապը շրջապատողները շատ ալ գոհ չեն այդ պարզութենէն։

ԱՒՍՏՐԻԱ

Պոսնոսարայէն կը հաղորդեն թէ տեղական իշխանութիւնները գիշերանց և գաղտնի մեծաքանակ ռազմամթերք կը տեղափոխեն Սերպիոյ սահմանագլխին մօտ գտնուող քաղաքները, ինչպէս նաեւ Եէնի-Բազարի գաւառը ուր Աւստրիա Պերլինի դաշնագրի համաձայն զօրք պահելու իրաւունք ունի։

ԱԶԳ

— —

Կը յայտարարենք Վառնայի և ուրիշ քաղաքներու մէջ գտնուած ընթերցողներու որ ընթերցարանիս մէջ կը ծախուին հետեւեալ գրքերը և պատկերները։

ԳՐՔԵՐ

Դիւցազնօրէն	1. Ֆր.
Ազատութեան ճանապարհին	Ա. 30
" "	Գ. 30
Ամրոխային տրամաբանութիւն	. 55
Ապստամբ Սասունը	. 20
Հայրենասէրի տաղերը	. 20
Հերոսը	. 20
Հայուհիներին	. 20
Ազատ երգեր	. 20
Մեծ առաւօտը	. 50

ՊԱՏԿԵՐՆԵՐ

Պետօ (Պուլկ.) փոքր.	. 10
Կարօ (Ա. Զօրեան) մեծ.	. 50
Ծշանաւոր հայ դէմքեր	1.—

Ուրիշ քաղաքէ եկած յանձնարարականները փութով կը կատարուին և գնողներու դիւրութեան համար Պուլկ. նամակադրոշմ ևս կ'ընդունուի:

Մօտ օրէն կը հասնին նաև «Պետօ»ի (Պուլն.), «Բարկէն-Սիւնի»ի, «Աղբիւր-Սերոբ»ի և «Պետօ»ի (Վանեցի) մեծ պատկերները 50 Սնդ. հատը։

Վարչութիւն

10 Սեպ. Վառնա — «Բարկէն-Սիւնի» Ընթ. Վառնայի

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

— —

Սարգիս Միքոյեան 35 տարեկան, (Պէթլիսցի) Կորվու գիւղացի, 1896էն ասդին իր գտնուիլը յայտնի չէ, իրեն ծանօթ, բարեկամ և կամ հասցէն գիտցողներ թող հաճին իմաց տալ.

Մարտիրոս Խաչատուրեան (Պէթլիսցի) մալ կռօն պօ, բոքս Նօ. 9 ի. Ամերիկա

Եւ կամ խմբագրութեան։

ՄԱՔԻ ՆԵՐԿ

ՀՐԱՇԱԼԻ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆ

Դիմել Պ. Ա. Զարպհանեանի Վառնա (Պուլկարիա)

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность" Варна